ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/259Ա

15/05/2020

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2020 թվականի ապրիլի 10-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝

- 10,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 5 տարի շրջանառության ժամկետով,
- 10,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 6.0% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 6 տարի շրջանառության ժամկետով և
- 10,000,000 եվրո ծավալով, 100 եվրո անվանական արժեքով, տարեկան 3.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 5 տարի շրջանառության ժամկետով,

անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2020 թվականի մայիսի 6-ին և 12-ին ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ազդագրի լրացումներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի մայիսի 13-ի թիվ 22 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գրանցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի ապրիլի 10-ին ներկայացված՝

   - 10,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 5 տարի շրջանառության ժամկետով,
   - 10,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 6.0% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 6 տարի շրջանառության ժամկետով և

- 10,000,000 եվրո ծավալով, 100 եվրո անվանական արժեքով, տարեկան 3.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 5 տարի շրջանառության ժամկետով պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՁԱՎԱԴՅԱՆ